ԲԱԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի
տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

« 04 » հուլիսի 2025 թ

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ ավագ դասախոս Մադոյան Նարեկ Էդուարդի

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Բանկային իրավունք

Մագիստրոսի կրթական ծրագիր՝ 042101.05.7 «Գործարարական իրավունք»

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.7 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան

«Բանկային իրավունք» դասընթացը ներկայացնում է բանկային համակարգի գործունեությունը կարգավորող իրավական հարաբերությունների հիմնական շրջանակը: Դասընթացում ուսումնասիրվում են բանկերի ստեղծման, կազմակերպաիրավական կառուցվածքի, կառավարման, լիցենզավորման, գործունեության կարգավորման և վերահսկման իրավական հիմքերը և գործընթացը:

Դասընթացը ներառում է նաև բանկային գործունեության հետ անմիջականորեն առնչվող իրավահարաբերությունների ուսումնասիրություն՝ բոլոր տեսակի վարկային, երաշխիքային, լիզինգային գործարքներ, դրանց ապահովման միջոցների գործարքներ, ցեսիայի գործարքներ, բանկային հաշիվների սպասարկում, էսքրոու հաշվիներ, պարտքերի բռնագանձման իրավական ընթացքը և տարբերակները, ինչպես նաև իրավաբանական անձանց գործունեությանը, սնանկությանը, աշխատանքային հարաբերություններին և քաղաքացիական դատավարության հիմնարար սկզբունքներին վերաբերող և այլ հարցեր:

Դասընթացը ուսումնասիրում է մասնավոր իրավունքի տարբեր ճյուղերը բանկային պրակտիկայում դրանց կիրառման տեսանկյունից:

Դասընթացի նպատակը և խնդիրները

- ուսանողներին փոխանցել բանկային գործունեության իրավական կարգավորման հիմնարար գիտելիքներ,
- ներկայացնել բանկերի ստեղծման, կառավարման, լիցենզավորման, վերահսկման և գործունեության կարգավորման իրավական հիմքերը,
- ձևավորել բանկային ոլորտում կիրառվող քաղաքացիաիրավական ինստիտուտների (պայմանագրեր, պարտավորություններ, ապահովման միջոցներ, վարկային հարաբերություններ և այլն) համակարգային ըմբռնում,
- զարգացնել իրավական փաստաթղթերի վերլուծության, պայմանագրերի գնահատման և իրավական ռիսկերի նույնականացման կարողությունները,

- ուսանողներին ծանոթացնել բանկային գործունեության հետ առնչվող կորպորատիվ, սնանկության, աշխատանքային իրավունքի և պարտքերի բռնագանձման իրավական գործընթացի հիմնական հարցերին,
- նպաստել գործնական իրավաբանական մտածողության ձևավորմանը և բանկային ոլորտում առաջացող իրավական խնդիրների լուծման հմտությունների զարգացմանը:

Դասընթացի մուտքային պահանջները

Ուսանողները պետք է ունենան՝

- իրավունքի տեսության վերաբերյալ հիմնական գիտելիքներ,
- քաղաքացիական իրավունքի հիմունքների իմացություն (իրավաբանական անձինք, գործարքներ, պայմանագրեր, իրավունքներ և պարտավորություններ),
- իրավական տերմինաբանության կիրառման և իրավական ակտերի ընթերցման որոշակի հմտություններ,
- առևտրային և կորպորատիվ իրավունքի վերաբերյալ պատկերացում:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱՇ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները ՝

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա հետևյալ գիտելիքները՝

- բանկային գործունեության իրավական կարգավորման համակարգի և սկզբունքների վերաբերյալ,
- բանկերի ստեղծման, կառավարման, լիցենզավորման և վերահսկման իրավական հիմքերի և գործընթացի մասին,

- բանկային գործունեությունում կիրառվող քաղաքացիաիրավական ինստիտուտների (պայմանագրեր, վարկ, գրավ, երաշխավորություն, երաշխիք, լիզինգ և այլն) վերաբերյալ,
- իրավաբանական անձանց գործունեության և սնանկության իրավական կարգավորման առանձնահատկությունների վերաբերյալ,
- բանկային գործունեության հետ առնչվող աշխատանքային և դատավարական իրավունքի հիմնական դրույթների մասին,
- բանկային ոլորտում իրավական պատասխանատվության և իրավական ռիսկերի վերաբերյալ:

Հմտությունները՝

- ***գիտելիքի կիրառման հմտությունները՝***

Ուսանողը կկարողանա՝

- վերլուծել բանկային ոլորտին վերաբերող իրավահարաբերությունները և կիրառել համապատասխան իրավական նորմերը,
- գնահատել պայմանագրային հարաբերությունները և դրանցից բխող իրավական ռիսկերը,
- պատկերացնել պարտավորությունների ապահովման միջոցների կիրառման և պարտքերի բռնագանձման եղանակները,
- կազմել բանկային ոլորտին վերաբերող պայմանագրերի նախագծեր՝ վարկային պայմանագիր, գրավի պայմանագիր, երաշխավորության պայմանագիր և այլն,
- իրավական հիմնավորումներով ձևակերպել դիրքորոշումներ և լուծումներ:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

- ***ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝***

Ուսանողը կկարողանա ինքնուրույն վերլուծել բանկային ոլորտում առաջացող իրավական խնդիրները, կայացնել հիմնավորված որոշումներ, կրել պատասխանատվություն իր իրավական գնահատականների և առաջարկվող լուծումների համար, ինչպես նաև գործել մասնագիտական էթիկայի և իրավական կարգապահության սկզբունքներին համապատասխան:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Բանկային իրավունք» 4 ակադեմիական կրեդիտ (144 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 1 ուսումնական տարվա 1 կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**144**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**32**
1.1.1. Դասախոսություններ	**16**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**16**
1.1.2.1. Դատական նախադեպերի ուսումնասիրություն	
1.1.2.2. Պայմանագրերի կազմում	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**116**
1.2.1. Ստուգարքին նախապատրաստում	
1.2.2. Իրավաբանական եզրակացության կազմում	
Ամփոփիչ ստուգում (ստուգարք)	**ստուգարք**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**
1	**2=3+4**	**3**	**4**

Թեմա 1. ՀՀ Բանկային համակարգ, գրանցում, լիցենզավորում. 1. Բանկի և ֆինանսական կազմակերպությունների կազմակերպական-իրավական տեսակները, կառուցվածքը, կառավարումը (կառավարման մարմինները): 2. Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների գրանցումը, լիցենզավորումը, գործունեության կարգավորումը, 3. Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից օրենսդրական խախտումների համար կիրառվող պատասխանատվությունը,	**6**	**3**	**3**
Թեմա 2. Բանկային գործունեությանը վերաբերող գործարքներ, իրավահարաբերություններ. 1. Վարկառու իրավաբանական անձինք, 2. գործարքներ/անվավերություն/առոչինչ/պայմանագրեր, 3. վարկային գործարքներ իրականացնելու համար լիազորագրեր, 4. փոխառություն/վարկ 5. պարտավորությունների կատարման ապահովման միջոցները (գրավի իրավունք/տեսակներ,	**14**	**8**	**8**

երաշխավորություն, տուժանք, նախավճար), 6. բանկային երաշխիք, 7. ցեսիա, 8. լիզինգ, 9. վարձակալություն, 10. ծառայությունների վճարովի մատուցում, 11. ֆրանչայզինգ, 12. հաշիվներ, ավանդներ, էսքրոու հաշիվ, 13. կանխիկ և անկանխիկ գործարքներ, 14. պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար/պարտավորության դադարում, 15. բանկային և առևտրային գաղտնիք			
Թեմա 3. Պարտքերի բռնագանձման եղանակները և գործընթացը 1. Բանակցություններ, 2. Սնանկության շրջանակներում, 3. Առանց դատարան դիմելու բռնագանձում, 4. Արբիտրաժի վճռի հիման վրա, 5. Ընդհանուր իրավասության դատարան բռնագանձման հայց ներկայացնելու միջոցով, 6. Հայցային վաղեմություն, 7. Քաղաքացիական դատավարության օրենսգրքի հիմնական սկզբունքները,	**6**	**3**	**3**

ապացույցների ներկայացում և հիմնավորում,			
Թեմա 4. **Աշխատանքային իրավունք** 1. Աշխատանքի ընդունում, աշխատակցի/գործատուի իրավունքները և պարտավորությունները, 2. Աշխատանքային պայմանագրի վաղաժամկետ լուծման իրավական հիմքերը,	**6**	**3**	**3**
Ընդամենը	**32**	**16**	**16**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Դասընթացի ներածություն

Թեմա 1. ՀՀ Բանկային համակարգ, գրանցում, լիցենզավորում

1. Բանկի և ֆինանսական կազմակերպությունների կազմակերպական-իրավական տեսակները, կառուցվածքը, կառավարումը (կառավարման մարմինները):
2. Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների գրանցումը, լիցենզավորումը, գործունեության կարգավորումը,
3. Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից օրենսդրական խախտումների համար կիրառվող պատասխանատվությունը:

Թեմա 2. Բանկային գործունեությանը վերաբերող գործարքներ, իրավահարաբերություններ

1. Վարկառու իրավաբանական անձինք,
2. գործարքներ/անվավերություն/առոչինչ/պայմանագրեր,
3. վարկային գործարքներ իրականացնելու համար լիազորագրեր,
4. փոխառություն/վարկ
5. պարտավորությունների կատարման ապահովման միջոցները (գրավի իրավունք/տեսակներ, երաշխավորություն, տուժանք, նախավճար),
6. բանկային երաշխիք,
7. ցեսիա,
8. լիզինգ,
9. վարձակալություն,
10. ծառայությունների վճարովի մատուցում,
11. ֆրանչայզինգ,
12. հաշիվներ, ավանդներ, էսքրոու հաշիվ,
13. կանխիկ և անկանխիկ գործարքներ,
14. պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար/պարտավորության դադարում,
15. բանկային և առևտրային գաղտնիք:

Թեմա 3. Պարտքերի բռնագանձման եղանակները և գործընթացը

1. Բանակցություններ,
2. Սնանկության շրջանակներում,
3. Առանց դատարան դիմելու բռնագանձում,
4. Արբիտրաժի վճռի հիման վրա,
5. Ընդհանուր իրավասության դատարան բռնագանձման հայց ներկայացնելու միջոցով,
6. Հայցային վաղեմություն,
7. Քաղաքացիական դատավարության օրենսգրքի հիմնական սկզբունքները, ապացույցների ներկայացում և հիմնավորում,

Թեմա 4.

Աշխատանքային իրավունք

1. Աշխատանքի ընդունում, աշխատակցի/գործատուի իրավունքները և պարտավորությունները,
2. Աշխատանքային պայմանագրի վաղաժամկետ լուծման իրավական հիմքերը:

Օգտագործվող գրականություն.

1. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք,
2. Կենտրոնական բանկի մասին ՀՀ օրենք
3. Բանկերի և բանկային գործունեության մասին ՀՀ օրենք
4. Բանկային գաղտնիքի մասին ՀՀ օրենք
5. Սպառողական կրեդիտավորման մասին ՀՀ օրենք
6. Բանկային ավանդների ներգրավման մասին ՀՀ օրենք
7. Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին ՀՀ օրենք
8. Անկանխիկ գործառնությունների մասին ՀՀ օրենք
9. Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենք,
10. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին ՀՀ օրենք,
11. Հիմնադրամների մասին ՀՀ օրենք,
12. Կանոնակարգ 8/05 «Բանկի և ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները»